*ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Նալբանդյանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար*

ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-7), աշխատակազմի առաջատար մասնագետների (ծածկագիր 3.1-9, 3.1-11,), համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին:

**1.ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ ( (ծածկագիր 3.1-7),**

ա) Անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:
բ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների
ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:
գ) Կատարում է գույքահարկի, հողի հարկի հավաքագրման աշխատանքները:

**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝**
ա) Միջնակարգ կրթություն:
բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ,«Համայնքային ծառայության մասին,, «,Հաշվապահական հաշվառման մասին,, «,Գանձապետական համակարգի մասին,, ,«Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության ու աշխատակարգի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
գ). Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

***Մրցույթը կկայանա 2021 թվականի օգոստոսի 25-ին, ժամը 12: 00-ին Նալբանդյանի համայնքապետարանի շենքում***

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2021 թվականի օգոստոսի 10-ը, ժամը 18.00:
Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նալբանդյան 4-րդ պողոտա, 2 շենք:
Հեռ.՝ 093-008-908 Էլ. փոստ՝ nalbandyan.armavir@mta.gov.am

**2. ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-9,)**

ա) Կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով:
բ) Հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին:
գ) Զբաղվում է համայնքի տնտեսական զարգացման հարցերով:

***Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝***

ա) Միջնակարգ կրթություն:
բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
գ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն:

***Մրցույթը կկայանա 2021 թվականի օգոստոսի 25-ին, ժամը 13: 00-ին Նալբանդյանի համայնքապետարանի շենքում***

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2021 թվականի օգոստոսի 10-ը, ժամը 18.00:
Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նալբանդյան 4-րդ պողոտա, 2 շենք:
Հեռ.՝ 093-008-908 Էլ. փոստ՝ nalbandyan.armavir@mta.gov.am

**3. ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-11, )**

ա) Կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով:
բ) Հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին:
գ) Զբաղվում է համայնքի հաշվետվություններով, միջնորդագրերով, զեկուցագրերով և այլն:

***Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝***

ա) Միջնակարգ կրթություն:-
բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն:

***Մրցույթը կկայանա 2021 թվականի օգոստոսի 25-ին, ժամը 14: 00-ին Նալբանդյանի համայնքապետարանի շենքում***

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2021 թվականի օգոստոսի 10-ը, ժամը 18.00:
Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նալբանդյան 4-րդ պողոտա, 2 շենք:
Հեռ.՝ 093-008-908 Էլ. փոստ՝ nalbandyan.armavir@mta.gov.am

***Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.***

ա) Գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով):
բ) Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների) աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին:
գ) Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
դ) Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
ե) <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք:
զ) Երկու լուսանկար (3x4 չափսի):
է) անձնագրի պատճենը:
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են Նալբանդյանի համայնքապետարանում և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչությունում, ամեն օր, ժամը 10-ից մինչև 18.00-ը՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերը և պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Նալբանդյանի հմայնքապետարանի աշխատակազմ (գ. Նալբանդյան, հեռ.՝ 093-008-908) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցեն ՝ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237-2-76-49/